ԿԱՏԱՂԻ ՀՐԴԵՀՆԵՐ - FIERCE FIRES IN SOUTHERN CALIFORNIA

Posted on January 8, 2025 by Keghart



Category: Opinions

Հարաւային Քալիֆորնիոյ Կատաղի Հրդեհները Տարհանեցին Հայ Ընտանիքներ Եւ Քանդեցին Տուներ Եւ Համայնքային Կառոյցներ

Ասպարէզ, 8 Յունուար 2025

Հարաւային Քալիֆորնիոյ զանազան շրջաններու մէջ 7 Յունուարին սկսած եւ 8 Յունուարին շարունակուած սաստիկ հովերուն պատճառով յառաջացած երեք մեծագոյն եւ կատաղի հրդեհները պատճառ դարձան տարհանման հազարաւոր հայ ընտանիքներու, որոնք ստիպուած եղան հեռանալու իրենց տուներէն, ինչպէս նաեւ համայնքի կառոյցներու քանդումին, ինչպէս՝ Փասատինայի մէջ գտնուող Սահակ Մեսրոպ վարժարանը, որ դարձաւ հրդեհին զոհը:

Հրդեհները տեղական իշխանութիւնները առաջնորդեցին իրենց բնակարաններէն հեռանալու հրահանգներ արձակելու, երաշխաւորելու համար բնակչութեան ապահովութիւնը:

Ալթատինայի, Փասատինայի, Լա Քանիատայի, Քրեսենթա հովիտի եւ հիւսիսային Կլենտէյլի մէջ ապրող մեր համայնքներու հազարաւոր բնակիչներ ստիպուած եղան հեռանալու իրենց բնակարաններէն:



Dangerous Fires Rage in Southern California

By Aram Arkun, Mirror-Spectator, 8 January 2028

WATERTOWN — Terrible fires have spread through several areas in Los Angeles County, including the wealthy coastal neighborhood of Pacific Palisades, the Eaton fire in the San Gabriel Mountains, spreading to Pasadena and Altadena and then going towards La Cañada Flintridge and parts of Glendale – all neighborhoods with large Armenian populations, and several places in the San Fernando Valley.

The fires started Tuesday, January 7, and spread due to the strong Santa Ana winds. Over 30,000 people in the Pacific Palisades area were forced to evacuate their homes, and over 52,000 were evacuated in Pasadena, Altadena and surrounding areas. Five deaths have been reported due to the latter fire.

Over 1,500,000 people had no electricity by Wednesday afternoon, January 8, in southern California,

The federal government is sending aircraft, helicopters and other firefighting equipment.

In Altadena, the Sahag-Mesrob Armenian Christian School has burned down, according to various individual reports, as well as homes of a number of Armenians there and also in Pasadena. Medical centers and other schools have also been damaged. The Tekeyan Cultural Association Beshgeturian Center in Altadena appears to be safe for now as is the St. Gregory A. & M. Hovsepian Armenian School in Pasadena.

A number of local Armenians the *Mirror-Spectator* contacted had been evacuated and went to stay with relatives in safer areas, though sometimes they had to move a second and even third time to escape the spreading fires.



Pasadena Public Information Officer Lisa Derderian told the *Mirror-Spectator* on Wednesday afternoon that there is still zero percent containment of the fire. Over 100 homes and structures were lost during the overnight ours. Pasasdena requested 50 strike teams (a strike team consists of five fire engines), and they have been arriving all day from several states. Some water-dropping aircraft have been arriving.

Meanwhile, she said that there were around 1,200 residents taking refuge at the Pasadena Convention Center.

She said, "This is the worst case scenario. It doesn't get worse than this." Derderian noted that the fires will continue to spread as long as there is wind, and it may go one for several days.

Glendale City Council member Ardashes "Ardy" Kassakhian told the *Mirror-Spectator* that Glendale is affected because after two years of very wet seasons with record rainfall, drought conditions dried up vegetation that were prone to fires, which the strong Santa Ana winds spread. It is too early to tell what started the fire in this area, whether arson or aging infrastructure, but fortunately for Glendale, he said at present the direction of the winds are not affecting Glendale. Evacuation of Chevy Chase and Glen Oaks Canyons, nestled between local mountains, were conducted as a precaution because it would become very difficult in conditions of fire.

A major problem is sufficient water pressure when there are fires of this size, Kassakhian added. All regional fire resources are stretched thin, with Glendale crews helping Altadena and Pasadena. The damage from the strong winds have also knocked out power around the city, along with a number of trees, he said. There were some 9,000 people still without electricity but in the last few hours it is being restored.

Kassakhian concluded that fires, windstorms and similar events are not things that are predictable, whether from a Democratic or Republican perspective, and it was not the time for partisan attacks, which have appeared on social media, since there is only one way to put out a fire.

*****

Photos: Reprinted from Mirror-Spectator

Comments



Vahram Aghajanyan – 2025-01-09 13:15:27
Արցախահայությունը տագնապով և մեծ ցավով է ընդունել Կալիֆոռնիայում մեր քույրերին ու եղբայրներին պատուհասած բնական աղետի ողբերգական լուրը: Սա այն դեպքն է, երբ ասում են «Դժբախտությունը մենակ չի գալիս». վերջին տարիների վիշտերն ու զրկանքները քիչ էին մեզ համար, հիմա էլ տարերային արհավիրքը: Չնայած արցախցիների սոցիալական ծանրագույն վիճակին, այժմ քննարկվում են ԱՄՆ-ում մեր հայրենակիցներին մարդասիրական օգնություն ցուցաբերելու զանազան տարբերակներ: Այստեղ իրենց խոսքը պետք է, իհարկե, ասեն Հայաստանի Հանրապետության իշխանությունները, որոնք պարտավոր են օգնել նեղության մեջ հայտնված մեր քույրերին ու եղբայրներին: Ինչպես հայտնի է, Նիկոլ Փաշինյանը կայծակնային արագությամբ է արձագանքել Թուրքիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժին՝ հաշված օրերի ընթացքում շռայլ օգնություն ցուցաբերելով թուրք քաղաքացիներին: Թուրքական մեկնաբանները նույնիսկ զարմացել էին թե Փաշինյանի՝ Թուրքիային օգնելու արագությունից, թե օգնության առատությունից: Հուսանք, որ նույն արագությունը Փաշինյանը կցուցադրի նաև Կալիֆոռնիայի հայ բնակչությանը աջակցելու հարցում: Անձամբ ես դա քիչ հավանական եմ համարում, հաշվի առնելով ՀՀ իշխանությունների այն ստորացուցիչ վերաբերմունքը, որին մինչ օրս արժանանում են ամեն ինչ կորցրած արցախցիները: Փաշինյանի կառավարությունը ոչ միայն չի օգնում արցախցիներին, այլև այս տարվա մարտից գրեթե զրկում է նրանց նույնիսկ այն ողորմությունից, որը տրվում էր մինչև վերջերս, ստիպելով մեր հայրենակիցներին բռնել գաղթի ճամփան: Ամեն դեպքում՝ հայ հասարակությունը պետք է ստիպի ՀՀ ղեկավարությունը նույն սրտացավությունը ցուցաբերի Կալիֆոռնիայի հայերի հանդեպ, որը նա ցուցաբերեց Թուրքիայի բնակիչների նկատմամբ: Միացյալ Նահանգների մեր հայրենակիցներին մաղթում ենք արիություն, տոկունություն և ոգու ամրություն այս դժվարին օրերին: Արցախցիները աղոթում են ձեզ համար և հավատում, որ մեր եղբայրներն ու քույրերն առաջիկայում կհաղթահարեն այս արհավիրքի հետևանքները: Աստված ձեզ պահապան: Վահրամ ԱՂԱՋԱՆՅԱՆ Լրագրող, Երևան



Tatyana – 2025-01-09 03:09:24
Սիրելի՛ հայրենակիցներ, Խորը ցավով ենք հետևում Կալիֆորնիայում տեղի ունեցող ավերիչ հրդեհների մասին լուրերին: Անասելի ծանր է տեսնել, թե ինչպես են մեր համայնքի անդամները կանգնած նման փորձությունների առջև: Չգիտենք, թե ինչպես կարող ենք օգնել այս պահին, բայց գիտակցում ենք ձեր ապրումների խորությունը: Ձեր ցավը մերն է, և մենք ուշադիր հետևում ենք իրավիճակին: Մաղթում ենք, որ արագ լուծումներ գտնվեն և իրավիճակը կայունանա: Միշտ ձեր կողքին ենք մեր մտքերով ու աղոթքներով:



Kevork Yazedjian – 2025-01-09 01:26:47
Հայրենիքէն խոր ցաւով եւ մտահոգութեամբ կը հետեւինք Գալիֆորնիոյ ահաւոր հրդեհներու լուրերուն: Մեր սիրտերը բոլոր վնասուողներուն, յատկապէս մեր ազգակիցներուն հետ են այս ծանրագոյն պահին: Այս անգամ մեզ հարուածեց բնութիւնը: Պատմութենէն գիտենք սակայն, որ մեր ազգը միշտ ալ տոկացած է մարդկային ու բնութենական արհաւիրքներուն, մոխիրներէն յարութիւն առած փիւնիկի նման եւ ստեղծած իր նոր, յաճախ նախկինէն աւելի բարւօք կեանք մը: Կը զօրակցինք աղէտեալ մեր ազգակիցներուն եւ կ՛աղօթենք, որ այս արհաւիրքը վերջ գտնէ շուտով, եւ բոլորս մէկ սիրտ, մէկ հոգի՝ հասնինք կարօտեալներու օգնութեան: Հայերս ունինք ժողովրդային ասացուածք մը՝ «Յոյսը վերջինն է մեռնում»: Ես այս միտքը չեմ ընդունիր: Հայուն համար՝ յոյսի մահ չի կրնար ըլլալ: Յոյսը, հայուն նման, անմահ է ու յաւերժական: Կարեկցութեամբ եւ աղօթակցութեամբ՝ Գէորգ Նաթալի (Եազըճեան) պատմաբան, Երեւան, 9 յունուար 2025-ի առտու



Ahmed – 2025-01-09 01:05:26
If this tragedy was caused by arsonists, as suspected by some, let humanity's curse be on them.